

յիբ շրջան ունեցող (Որացոյցներու և ժա-  
մակարգութեանց. զոր օրինակ Ամբրոսիոս՝  
հերետիկոսներու սովորութենէն հեռանալու  
համար, և ուրիշներ ալ՝ զոր կը յիշատակէ  
Մարգրեն՝ կամ ծուլութեան և կամ տգիտու-  
թեան պատճառով: Այս կերպով նախան-  
ձախնդիր Տետրիկիոս պատուական Հայրը  
երբ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Առտի-  
զիոզորեայ եկեղեցոյն՝ վերոյիշեալ բարե-  
փոխութիւնն ըրաւ աստուածային պաշտօնը  
դիւրացնելու համար իր տգէտ կղերիկոս-  
ներուն: Արդեօք նոր շրջան մ'էր զոր Ս.  
Տետրիկիոս կարգադրեբ էր, թէ մոռցուած  
կամ երեսի վրայ թողուած հին սովորու-  
թիւն մը վերականգնեբ էր:

Այս հարցման պատասխանելէ առաջ  
պիտի յիշատակենք՝ որ Նիկիոյ ժողովքէն  
ետը Աղեքսանդրիոյ եկեղեցին պաշտօն  
յանձն առեբ էր (Որացոյցը կազմելու, և  
սահմանելու ամէն տարի Չատկին թուա-  
կանը, Բայց թշնամական գործերն արգելը  
եղան այս սովորութեան գործադրութեանը.  
որովհետեւ այլ և այլ երկիրներու եկեղե-  
ցիներ այլ ևս չկարենալով տեղեկութիւն  
ունենալ Աղեքսանդրիոյ մէջ սահմանեալ  
կանոններուն վրայ՝ իրենց կողմանէ նոր  
օրացոյց կը կազմէին, միշտ ամսական  
շրջանը լուանական տարիէն առնելով:

Ըբ ըրած հարցման դառնալով կ'ը-  
սենք՝ որ ըստ մեր կարծեաց՝ Ս. Տետրի-  
կիոս նկատելով իր ժամանակին տգիտու-  
թիւնը՝ փափաքած է սահմանել լուանային  
պարզ օրացոյց մը, անխտիր ամենուն  
համար: Ինքը կը սահմանէ չորս շաբաթ  
ամսուան մը համար. իւրաքանչիւր ամիս  
28 օրով, և տարին կ'ըլլար 336 օր. բայց  
արեգակնային տարին լրացնելու համար  
հարկ կ'ըլլար իրեն՝ ամիս մ'աւելցնել  
29 օրով. և այսպէս իր կղերականները,  
ուրիշ չորս շաբաթ ալ պաշտօնավարելով՝  
իրենց եկեղեցական պարտքը կը կատա-  
րէին՝ առանց բնաւ շուարեղու և միան-  
գամայն արեգակնային շրջանին հետ կը  
համաձայնէին:

Թերեւս Ս. Տետրիկիոս բնաւ չէ մտա-  
ծած ինչ որ մենք այսօր իրեն կ'ընծա-

յենք. բայց այս՝ ամենեւին իրեն նախա-  
տինք մը չէ:

Թրգմ. Հ. Ե. ՍԻՐՈՒՆ. Հ. ԳԱՐ. ՆԱԼԱՊԵՏԵԱՆ

Մ. ԽՄԲ. — Ահա խոստումներ կատարեցիք, առ  
ի օրոյց սոյն ծրարքն վաղորեայ գոյութեան՝ զոր  
վերջերս այն իրենց յայտարարեցած էին. (տես Քազմ.  
1922 թ. 5. էջ 142):

**ՀԱՅՎԱԲԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻ ՅԻՍՈՒՅԵԱՆ**

ՎՊՆՆԱԹԻ է բանասիրաց ազգիս՝ Յի-  
սուսեան վարդապետն Յակօր Վիլլօտ՝ (Ja-  
cob Villotte) որ զամս քսան և հինգ  
բնակեցաւ ի միջի Հայոց թէ՛ ի Պարսկաս-  
տան և թէ՛ ի Հայաստան, և ուսաւ զլեզու  
և զբարբառ ազգիս ամենայն յաջողու-  
թեամբ, որպէս ի յայտ գայ ի նորին եր-  
կասիրութեանց ի Հայ լեզու՝ թէ՛ տպագրեբ  
և թէ՛ ձեռագիր: Երնթացս երկոտասանա-  
մեայ դեգերմանն ի ծննդավայրն իմ ի  
Նոր-Ջուղա, որ յԱսպահան Պարսից, ուր  
և ունէին Յիսուսեանց եկեղեցի՝ մի յա-  
նուն Սրբոյն Յովսեփայ՝ և որ զարդիս  
յաւերակս դասեալ կայ, զհետ եղև Յակօր  
Վիլլօտ ուսման դասական ճոխ զբակա-  
նութեան մերոյ մեծաւ աշխուժու և եռան-  
դեամբ, և յոյժ յաջող հանդիսացաւ յայն-

1. Եկեղեցիք և վանք կաթօլիկաց ի Նոր-Ջուղա էին  
չեռագայք.
- ա. Սուրբ Աւետեաց՝ շինեալ ի Եւաքիմանեանց յա-  
պարանս իրեանց:
- բ. Սուրբ Յովսէփ՝ շինեալ ի Յիսուսեանց (Societ.  
Jesus):
- գ. Սուրբ Եղիա՝ շինեալ ի բուհոս կարմէլեթեանց  
(Carmelitani discalceati):
- դ. Գովհնիկեան վանք՝ շինեալ ի Գովհնիկեանց (Do-  
menicani):
- Առաջին երեք եկեղեցիք ընդ աւերակս դատեալ կան,  
այլ սակայն կայ և մեայ ցայսօր վանքն Գովհնիկեան  
ի Նոր-Ջուղա, Ունէին Հովհնիկեանց և յԱսպահան  
մայրաքաղաքն Պարսից վանս երիս՝ որք էին.
- ա. Քափուշիկի վանք (pp. Capucini) ի դաւաթա,  
բարց:
- բ. կարմէլեթան վանք (pp. Carmelitani discal-  
ceati) ի Գովհնիկ:
- գ. Օգոստինի վանք (pp. Augustiniani Lusitani)  
ի Նուսէյիս, Չկան այսօր և հետք անգամ սոյն երեք  
վանքից յԱսպահան քաղաքի:

միկ՝ որպէս տեսանի ի ձեռագիր մատենէ իմեքէ՝ որ գտանի զարդիս ի մատենադարանի իմում աստ՝ գրեալ և շարադրեալ ի նոյն Յակոբայ Վարդապետի՝ անդ ի Նոր-Ջուղա յամին 1707, յորում փայլի հայկարանութիւն նորա՝ որպէս ունին տեսանել ընթերցողը ընթացս գրութեանս ի Յառաջդրանի Չեռագրին ասէ Յակոբ Վիլլոտ՝ թէ յամին 1677 հրատարակեցաւ ի փարիզ քաղաքի պատկերազարդ մատենան մի զաղղիրարէն լեզուաւ՝ զկենաց և զհրաշագործութեանց Յիսուսի Քրիստոսի, յորմէ օրինակ մի գայ հասանէ ի Նոր-Ջուղա և անկանի ի ձեռս խօջայ Մանուէլի Մարգար Սարհատեանի՝ որ ի Շահրիմանեան զգնիւ տոնմէն։ Որդ որպէս յայտ է բանասիրաց ազգիս՝ հայրենակիցք իմ Շահրիմանեանք էին Հոովմէական եկեղեցւոյ հպատակք և զօրավիզ շատագովք և պաշտպանք՝ Յիսուսեանց՝ որք ի Նոր-Ջուղա։ Գուով այր ջերմեանդ և կրօնասէր իսկ՝ խօջայ Մանուէլ մեր խնդրէ ի Յակոբ Վարդապետէ ամել զայն մատենան փարիտաբիպ ի Հայ լեզու, և ի նորին թախանձանաց զիջեալ գրէ Յիսուսեան կրօնաւորն

զայն՝ թէ՛ թարգմանութեամբ և թէ՛ յաւելմամբ իսկ յինքենէ՝ որպէս յիշատակէ հեղինակն ի Յիշատակարանի անդ Չեռագրին։ Եւ որպէս զի երկասիրութիւն իւր կատարեալ իցէ ըստ ամենայնի՝ գետեղ Յակոբ Վարդապետ ի Չեռագրի իւրում ցամաքով գեղեցիկտիպ պատկերան, թուովը մի հարիւր և երեսուն և երկու, որք գտանէին ի փարիզեան տպագրին, և այսպէս յաւարտ հանէ զգործն՝ յաւելտ տարծանակիր՝ իւրով իսկ զընտթեամբ ի վերայ յղկեալ թղթոյ՝ ըստ օրինակի հին Չեռագրաց, սեաւ մէջնաւ և կարմիր զլիսագրօք, ի միջի կրկին սրնակաց կարմիր շրջանակօք։ Ունի Չեռագրին էջս 782 և գրեալ է պարսկական եղէգնեայ գրչաւ, յոյժ է գեղեցիկ, կանոնաւոր և կիրթ գրչութեամբ։

Յսկզբան Չեռագրին տեսանի ճակատ փարիզեան տպագրին՝ որ է օրինակ զայս.

Tableaux  
Sacrés  
De La Vie  
Doctrine, Miracles  
Mort, Résurrection  
Et Ascension Glorieuse  
de  
Jesus Christ

Pour Porter Les Plus Grands  
Pêcheurs à la Pénitence, & de la  
Pénitence à une parfaite Sainteté.

Représentés au naturel en Cent  
trente-deux figures gravées en tail-  
le-douce par les plus excellents Hom-  
mes de ce Siècle.

Avec des Réflexions Morales &  
Instructions Chrestiennes au bas  
de Chaque Planche, pour servir  
d'Entretien aux Ames Dévotes et  
Religieuses dans leurs Saintes Mé-  
ditations & pour appliquer leurs

1. Ի Պարզեազրէ Էկորտոսի կայսեր Աւստրիոյ՝ որ ընդ թուով 23 ամեանն Յունիսի՝ 1699՝ որով զՇահրիմանեանն «Ալումա» անուանէր, ի միջի այլոց յաւելու և զայն՝ թէ «Յորժամ մարդասիրապէս ծանեաց թէ որք վերջ անուանեալ կոմք Տուսխարադու և Ջուղայո» ոչ միայն ցեղեալ էք ի հնագոյն Շահրիմանեան Տոնմէն, այլ և Նախնիքն, և Պապուրջն Չեր, և թէ որք ամենամեծ գովութեամբ արարեալ էք զպայժառայոյն զանազանս զօրծն, և զգերագոյն զօրութիւն, մանաւանդ ի տարածանել զկաթողիկէ Հաւասան ի միջի յայտնագոյն վտանգից կենաց, սպառնելով զյուով ինչ և զքաղաքս, և զարիւն ևս հեղուով, ամենեկն արժանի համարեցան, զի որք ոչ միայն զվերջիցեալ Նախնեաց Չերոց պայժառագործութեանց Հանդերձ անճանական և փառաւոր յիշատակաւ Անուան Չերոյ առջիք ի Մէնջ գմիշտ անցական վկայութիւն, այլ և ի համարժանիս պատուոց և մեծութեանց աստիճանս, իբր որք ինքնին յանձնեցեալք Չեր յատուկ զօրութեանց և արդեանց, ի ձեռն Մեր շարժաւորք, որով ապագայից Չերոց և այլոց ևս հաստարժմ հնազանդեաց Մերոց՝ մեծագոյն օրինակ, և ի Մէնջ իթան տարբէ վան արժանապէս ստանալոյ, և ընդգրկելոյ զայսպիսի Էանս արժանութեանս».

pensées sur le Sujet des Sermons & Exhortation de toute l'Année.

A PARIS

Chez Jean-Baptiste Loyson, au Palais, devant la Sainte Chapelle, à la Croix d'Or.

M. DC. LXXXII.

Avec Approbation des Docteurs.

Իսկ Հայերէն ճակատն (Title-page) է այսպէս.

Նկարունը Սրբազանը

Կենաց

Վարդապետութեան հրաշագործութեանց

Մահուան Յարութեան

Իւ փառուոր Համբարձման

Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի

Ան ի զարթուցանել զմեղաւորս յապաշխարութիւն, և յապաշխարութենէ առաջ ածել զնոսա ի կատարեալ սրբութիւն:

Թորինեցեալ, ՂԱԲ. վայելչահիւս պատկերօք, ճարտարութեամբ հմտագոյն արհեստարարաց մամանակիս այսորիկ:

Յաւելան ի ներքոյ իւրաքանչիւրոյ պատկերին խոկմունք վարդապետականք ի քրիստոնէական ուսումնքն ի պէտս ջերմեանդ և բարեկրօն հոգւոց և ի նիւթ մտածական աղօթից նոցա:

Շարագրեալ յումենն Յակոբ-Վարդապետէ, ի կարգէ յիսուսեանց. ի փառս մեծագոյնս Աստուծոյ:

Յառաջարան ձեռագրին է ըստ հետազայ օրինակի:

Առ ընթերցող

Նրիսում ամբ եմ յորով հետէ յաշխարհամմամ փարէս քաղաքէմ անալ ի լոյս զիրք մի մակագրեալ Աստուծին կենաց և մահու Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի, զեղեցիկահիւս պատկերօք յօրինեցեալ, մեծաւ ուրախութեամբ և ընդարձակութեամբ սրտի զգիրքմ զայմ ընկալամ համօրէմ քրիստոնեայք, բայց յաւել հայոց ազգմ, որ ունի առեալ յԱստուծոյ զայմ յասուկ և սեպակաւմ շնորհմ զի կարի և յոյժ հրճուի ըմթերցմամբ սրբոյ անտարանիմ, բայց վասմ այնորիկ զի դոյզ ինչ օգնէր մոցա զուարճանալ տեսութեամբ լոկ և համերց պատկերաց աւետարանիմ, և ոչ ունել մոցա զպարզ իմացումն, ես շարժեալ և զարթուցեալ ջերմեանդ սիրովմ զոր զայնքամ ամամ ունիմ առ լուսաւորչիմ որդիսմ, ի ստէպ խնդրոյ բարեպաշտի թօչա Մանուէլիմ յազմուականէ և տիեզիրայլոր տոյժէ ուղղալուսամ Սար. համջէր յիմէմ, զի վասմ հասարակ օգտի Արամեան ազգիմ, զմեկնութիւմ սրբոյ անտարանիմ անից ի լոյս. զրուեմ արկի ի մեկնութիւմ պատկերաց այնոցիկ և մեծ ողորմութեամբ Աստուծոյ զգործմ համի ի գլուխ. դու ով սիրելի ըմթերցող դիւրասիրտ վայելեալ զանուշամաստ պտուղն բազմամեայ աշխատամաց իմոց, և զիս յիշեալ ի ջո սուրբ աղօթսդ:

Յ-Ի-Բ Վ-Է-Դ-Կ-Ը

Կան երկու Յիշատակարանք ի վերջ ձեռագրին, յորոց առաջինն է հետագայդ.

Բայց ի ծայրագունէ զազաթէ ամտի մեծութեանց քոց, ով ամեմասրբուովի մարիամ. դարձո՛ւ առ մեզ զզմեծոք անչաղ, դու որ կոչիս և ես իսկ ողորմութեանց մայրն, տապանակ մերոյ ուխտի, ընկալ զմեզ ի մերքոյ թևոց քոց, զի հեղձամուլծ մի լիմիցիմք ի մրկամբօսի ծօղումն աշխարհիս. երկմտիք ծիածան երևեցող զամմ ջո յամպլ. ցածուցանել զբարկութիւն անխնայատիմ Աստուծոյ որ մայր ես ամենեցուն. զասմ ամենեցուն լեր բարեխօս առ տեր և որոց սիրտքմ առ այլ ինչ ոչ գիտեմ՝ բայց միայն առ փառս Աստուծոյ. խնդրեալ դու յԱստուծոյ զի յամեմայնի կատարեսցէ զիկմն սրտից մոցա. ուրեմն բարեխօսութեամբ քով սփռեսցի ըմդ աշխարհ ըմդ ամեմայն ճրիտոսի փրկարար հաւատ, արծանացեալ փայլեսցի յամեմայն տեղիս որդւոյդ զիսհալած իաչն, իլեսցիմ արմատաքի յազարակէ տանուտեանմ ամեմայն որոմունք հերձուածողութեանց, ի բաց արա ի սամմանց քրիստոնէից զարհաւիր պատերազմաց, և ի մէջ մոցա հաստատեալ զիսհալութիւն. քեզ տամիցեմ հիւանդք զսողողութիւնս սզաւորք զմիւթարութիւն, ուղևորք զբարի գա.

մնապարհ, այլ կոծեայք զմաւրսանցիստ, մեղաւորք զթողութիւն, մնչեցեայք զարքայութիւն.

Հայեանց զթողութեան աչօրդ ի տառապեայ ազգմ հայոց, և որք ի մոցամէ ճշմարտասիրութեամբ ըմբիկեցցեմ զգիրքս զայս, լուսաւորեա՛մ զու զվիտս մոցս սնամաշի զճշմարտութիւն և զսիրտս մոցս հաստեղեա՛մ ճշմարտութեամ հմազամղիլ, ամենեցեայ լիցիք քեզ մամասանդ քո հաստասիրմ ծառայ մամուլէ ամուծ ի բարիբարոյ տոհմէ ուղղադասամ սարհատեանցմ, պահե՛մ զմա, մորս տասիր և ամենայն ըմտանծօք հանդերծ, և որովհետեւ աստուածպաշտութիւն մորս եղև իմծ առիթ և պատճառ զայս մեկնազիրս շարաբարելոյ, զբարի մախանծ մորս մի թողցես առանց վարձու, աղբիւրացոց ի վերայ մորս և ի վերայ որդւոց մորս և ի վերայ ամենայն ազգականաց մորս զյորդա, հոս ծորամս օրհնութեանց քոց, երկրաւորաց և երկնաւորաց, տուր մոցս զվամառ յաջողական, շնորհք մոցս զերկար կեանսմ, տուր մոցս ամփոքով վարիլ զատուրս իւրեանց իսաղաղութեամբ և ի վազմամի հաղորդ լինել փառաց արքայութեան և ընդ քեզ փառաւորել զորդիդ քո ընդ հօր և ընդ հոգւոյն սրբոյ, յամենեանս յախտեմից, յա՛մէ եղիցի.

Յաւարտեցաւ զիրքս\* այս յամի Տեառն Աժճէլ, յուճիսի ամսոյն ի՞ք, ի փառս Աստուծոյ, և ի պաշտս ճշմարտասիրաց հայկազունեաց, Տէր յաշնդուս, և ըմբիրցօղմ աղօթիկաց զվասն իմ մեղաւորիս:

**Իսկ երկրորդ Յիշատակարանն, յորում գտանի ազգաբանութիւն Խօջայ Մանուէլի Ըահրիմանեան՝ ունի որինակ զայս.**

«Արհմութիւն, գոհութիւն, պատիւ փառք և երկրպագութիւն երրորդական ամձմաւորութեամ և եզական աստուածութեամ, և մի ըմութեամ, զուգահասար տէրութեամ և զուգակշիռ համապատուութեամ, միաչափ զօրութեամ և համազօր երրորդութեամ, որոյ ոչ սկիզբմ աւուրց և ոչ յախտեան ժամամակաց, որում ոչ հասանի չափ և որակ, թիւ և քամակ, քանզի իմքմ է արարիչ աւուրց ժամամակաց, զարուց և յախտեանց, զոյացոյթութեաց և պատահմաց, երևելեաց և անյայտից, մի պատճառ ամենեցուն, Հայր և որդի և սուրբ հոգի, երրորդութիւն ամբաստնիլ, և միութեան անշփոթիլ, ի միութեանմ բաժանելու և ի բաժանմամբ միատրեայ, Ամհասանիլ, անմամալիլ, անհետագօտիլ, ամտեցի, ամձուր, ամվարպիակ, ամուրքք քմձիլ ամենայնի, և հասու ամենեցուն, ամմատչիլից հոտուր, և ամըմուրիցիլի մերձաւոր, տեսօղ զործոց անգործելեաց, և զմեօղ սրտից և երկիվամաց, վերալացու ամենեցուն և ոստիկան ճշմարտապէս, զատաւոր սմենեցուն և հատուցանող արժամապէ՛ս՝ բոտ իւրաքանչիւր զործոց արդարութեամբ, զերազոյ աստուածութիւն և զհրակայ տէրութիւնմ, ամլոնիլի փառաբանութիւն, և անլմար գոհաբանութեան ամենասուրբ երրորդութիւնմ, անսպաս յախտեմի, և անպայման կէտահարութեամբ, ամէմ և եղիցի.

Արդ աղաչեմ զպատարձօղձ աստուածաբան և լուսազարդ պատկերացոյց և անտարամապատում տառիս, յիշել ի քրիստոս աղբրսմ զպայազատ և զազմիւ ծառայմ քրիստոսի Գարոն Մամուլէլմ սարհատեան, որ յոյժ սիրով և ըղձափափազ սրտիւ անանցելի մակագրել ետ զգիրս աստուածունակս, ի լուսաւորութիւն մտաց իրոց, և ըմբիրցում ասպազայից եկելոց, քանզի լուզում թախանձանծք հարկեալ եղև վարդապետի ունեմ մակօղայ, ի զարգէմ յիստական վարդապետաց, զոր մա ամյապաղ և ամձանծիր կատարեաց զմոզիր հայցուածոցմ և ի բաց հոգեւ զվշտաշտ վարամ ըմութիւն իրոց բանից և գործոցմ, և եկից զվարպազ սրտի մորս և սկսաւ մեկնել ի հայ բարբառ և լեզու զպատկերացոյց աստուածապատում բանից ճեառմ, յոյժ խոհմ և համեար բանիք, մի միայն զզբնայսմ ի զաղափարի ամդ, այլ և պատուածմ և զհարկաւորսմ և եկաց իմացմամբ տեսողաց և ըմբիրցողաց, և պայծառացոյց, յիշտակ բարի թողեալ հետազայ եկիցից եզբարց, որում տէր հատուրցէ զվարձ փոխարկեացմ ամէմ.

Հասել յիշատակ Բարեպաշտի և լի հաստով ծնողացմ իւրոց, Խօջայ Մարգարիմ և զմանուգեալ մօրմ իւրոյ երկիւրածաւուր թագունոյն, զոր համղիպողացը սերելեաց, յիշել աղաչեմ ի քրիստոս

1. Աղայ Եահրիման Կախաշայր տոհմի ունի երկու որդիս Սարգատ և Զարբաղէ. Սարբաղ ունի երկու որդիս. Մարգար, Միքայէլ և Մուրատ: Մարգարայ որդին էր առն Խօջայ Մանուէլ՝ բարեկամ Յակօբայ Յիսուսեան վարդապետին: Կասակոտ տոհմի էր Աղայ Մուրատ՝ որ եկի ի Զուլա յամին 1605, և ունի որդիս երկուս՝ Եահրիման և Կազար. Ըտ աւանդութեան Եահրիմանեանց էին Յաջորդը Հայ Կախարարաց՝ զորմէ ունիմ զրեւ չիլ ինն առիւն:
2. Ինչեակ է Յակօբ վարդապետ՝ ի միջի այլոց՝ և շեանեալ մատնից ի Հայ լեզու.

- ա. «Մեկնութեան դաստեղծեան ուղղափառի շուստոյ: Երազարեալ ի Յանք վարդապետին ի կարգէն Յիսուսեանց, յամի տեան 1711»: Տպագրեալ ի Հոմմ.
- բ. «Պատմագրութիւն կաթողիկոսաց և թագաւորաց Հայոց»: Երազարեալ է Յակօբ վարդապետի ի կարգէն Յիսուսեանց, և սպեկեալ խարճիւց և հոգաբարձութեամբ տեան Արտիմէն արճ - կաթիկոսոսի կոտանդուպօլսեանց, 1718, Սեպտեմբեր 30, և Վենետիկ, ի տպարանի Անտոնիոսի Պօսթօլի »:
- գ. «Զարք իովմունց յաղապ յաւանեականութեան »: Երազարեալ է Յակօբ վարդապետի ի կարգէն Յիսուսեանց: Ի Հոմմ, ի տպարանի սուրբ Ժորձայն, յամի տեան Աժճճճի.

յոյսն ըմտից, ամէ՛ծ. Արդ կրկնարժանկող աղերսն զի ամենայն յօժարամտական բամբուք յիշեսցիք ի մաքրափայլ յաղօթս ձեր, զբացուշիմ Գարոն Մանուէլն, և զհարազատ բարեխոնմ հղարարն իր Գարոն Աստուածատուրն և զժրագլխաց թորքն իր զհոսփառնէմ և զԽնամտատրիկն, Ոսկ հնամգուցելոյն ի Քրիստոս Ջերեղայն զոր ի տիս մամկական հարսնութեան փոխցուա՛ր որոց լիցի այցելութիւն ի տէր ամէ՛ն.

Դարձնալ յիշեսցիք ի Քրիստոս զհաստարիմ ծառայմ Քրիստոսի Գարոն Մանուէլն և զՈղորարողոյն և Քրիստոսի զօրացեալ զորդին՝ իւր Գարոն Ալէքսանդրն և զժաղցրատես բարգաւաճեալ դուստրն իւր Մալվարն և զհամիտես զաւուսիմն իւր Շահգաւտէն և այլ ամենայն արքան մերձաւորսն իւր՝ զորոց Տէր տացէ կիսանս հր-

կայնս և խաղաղակամս, ամէ՛ն, Յամի զեմարարիմ մերոյ որ յաշխարհի՛ր՝ Ռ է ճ է և ըստ թուոյ հայկական տոհմիս, Ռ Տ Ծ Զ. յամսեանմ յունիսի իէ, զրեալ եղև ի զամս արքայամիմ, և ի քաղաքս թագաւորակամ. ի զորոց շու կոչեցեալ որ այժմ ասի ասպահան, ի հայրսպետութեան հայոց սըլքրասէր Տէրն Ալէքսանդրի երեցս երջանիկ հայրապետի, և ի զիտապետութեան յերկրիս պարսկականի Տէրն Մոլոյեոսի աստուածաբան վարդապետի, արքեպիսկոպոսի ի զեօղաքաղաքիս Նոր Քուղալու, ի ժամանակմ թագաւորութեան պարսից Շահսուլթամ յուսէմի, խոհմն և քաղցրատես արքայի, յորոց լիցի կեանք երկայն, և զի քաղաքս ակամբ հայեսցիմ ի վրայ ժողովրդեանս իւրեանց, բարի հովանաւորութեամբ, թէ՛ հոգևոր և թէ՛ մարմնաւոր վերակացութեամբ. Ամէ՛ն.

(Շարունակելի) **ՄԵՐՈՎԵ Յ. ՍԵՔՆԱՅ**

1. Մի յորդոց սոյն Խաշայ Մանուէլի, Սարհազ անուն, ծնեալ ի Կոր - Չուզ յամին 1710, զբաւեցաւ ի կենաց՝ աստ ի կալկաթա յամին 1738 ի ծայրիկ հասակի 28 ամաց, և շիրիմ նորա ստանիկ ցալսոր ի վանս կաթողիկաց՝ որ առ երկ Կազարեթայ սուրբ եկեղեցոյն մերոյ, ունելով երկէզու տապանապէր՝ ի Հայ և ի Լատին:

Հայ տապանապէրն է օրինակ զայս:

Աստ ամփոփի ի տապանի  
Մարմին ունեն ջարեպաշտի  
Ռոյ անուն Սարհազ կոչի  
Որդի էր աս Մանուէլի  
Ազգ գուլով Զուրաբցի  
Ի ի սուլմն Շէրիմանի  
Ի աշխարհս սո փոխարդի  
Կսկիծ թողեալ իւրոյ սուլմի  
Եւ ի Քի՛՛՛ն Ռ Ճ Զ Ի՛

Իսկ Լատին տապանապէրն է այսպէս.

Tristes hic jacent exuviae Emmanuelis Sarhad natione Armeni, ex illustri Xerimanorum stirpe in Persia oriundi sed vera fide (quam ad obitum usque integre servavit) magis Laudandi, licet aetatis flore, vigesimo scilicet octavo, Raptus fuerit, attamen consummatum in brevi explevit tempora multa, placita enim erat Deo anima illius propter hoc propositum educere illum de medio iniquitatum: aeternitatis laurea cum coronatus mortem oppetiit die nona Martii 1738.

Ի սոյն վանս կաթողիկաց գտանին և այլ շիրիմս պայազատ Շահրիմանեանց՝ Հայ և Լատին արժանազուրութեամբ՝ զորս ունիմ հրատարակել ի մտոյ ի Պատմութեան Շահրիմանեան ազնիւ սուլմն, որք փայլեցան և փայլեցոցին զագոց՝ յապարիզին վաճառակտութեան ի կալկաթա, ի Մարգաթ, ի Վհենտի, ի Լիվոնոս և յայլ քաղաքս Եւրոպոյ՝ յընթացս 17դ և 18դ դարուն:

**Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն**  
**Տ Ն Տ Ե Ս Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն :: ::**  
**:: :: :: :: Վ Յ Ս Ա Ս Ա Ն**  
(L'ARMÉNIE AU POINT DE VUE ÉCONOMIQUE)

Թէ՛ էնքրիմէջ և թէ՛ ներկայ ժամանակիս պարագաներուն նկատմամբ՝ շատ օգտակար գերբ մ'է, ինչ որ Պարսի մէջ այս տարի հրատարակեր է Հայ Հանրապետութեան Պատուիրակութիւնը: Այս պատուական երկասիրութեան մէջ՝ որ իննամբով և կառնիլի եղած ճշգրտութիւնով պատրաստուած է, և շատ պատուաբեր Հրատարակողնէրուն, յետ համառօտ և ընդհանուր հայեացք մը տալու Հայաստանի պատմական և աշխարհագրական մասին սկիզբէն մինչև մեր օրերս, կ'անցնին Հրատարակչները պաշտօնական և կիսապաշտօնական վիճակագրութեանց համաձայն՝ աշխատկներով ցուցադրելու Հայաստանի հանային և ջրային հարստութիւններն և անոնցմէ որքան օգուտ քաղելու կարելիութիւնը և յետոյ մէջ կը բերեն ներկայիս Հայաստանի մէջ գետեղուած երկաթուղիներն և երկրագործական զարգացման աստիճանը: Հատորին վերջը գետեղեր են առանձին ցուցակներով — ա. Երեւանի նա-